ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2021 թվականի N 1580-Լ

2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով և 2-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել 2022 թվականին իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

2. 2022 թվականին իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերը Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
սեպտեմբերի 30-ի N 1580-Լ որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ

Ծրագրի դասիչը	Միջոցառման դասիչը	Միջոցառման անվանումը	Պետական մարմնի գերատեսչական դասիչը և անվանումը	Հետազոտություն-ներ	Հետազոտությունն իրականացնող կազմակերպության անվանումը	Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)
1162	11006	Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ	104010 - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն			135,960.0
				«Մատենադարան» հիմնադրամի «Մատենադարանի մեծադիր ձեռագրերի (Հայսմավուրքներ, Ճառընտիրներ) և հազվագյուտ վավերագրերի ամրակայում ու գիտատեխնիկական մշակում» ծրագրին պետական աջակցություն	«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ԳՀԻ» հիմնադրամ	21,600.0
				ՀՀ ԳԱԱ Մ.Գ. Մանվելյանի անվ. ԸԱՔԻ ՊՈԱԿ-ի «Ռադիացիոն- կայուն և լազերային լոկացիայից պաշտպանող ապակեկերպ ու կոմպոզիտային նյութերի մշակում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Մ.Գ. Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ	24,972.0
				ՀՀ ԳԱԱ ՄԿԻ ՊՈԱԿ-ի «Հայկական գենոֆոնդի կայունության գործոնները» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	16,900.0
				ՀՀ ԳԱԱ «Էկոկենտրոն» ՊՈԱԿ-ի «Փորձագիտական երկրաքիմիական քարտեզների մշակում կայուն գյուղատնտեսության զարգացման և սննդի անվտան-գության ապահովման համար» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ	15,600.0

				ՀՀ ԳԱԱ ԿՀԷԳԿ ՊՈԱԿ-ի «Սևանա լճի էվտրոֆացման մեխանիզմների գնահատում և «ծաղկման» երևույթների դեմ պայքարի մեթոդների մշակում» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի«Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	14,400.0
				ՀՀ ԳԱԱ Բ.Նալբանդյանի անվ. ՔՖԻ ՊՈԱԿ-ի «Կիրառական (կոմերցիոն) նշանակության տիտանի հիմքով համաձուլվածքների սինթեզը Հիդրիդային ցիկլի եղանակով» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Բ. Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	12,000.0
				ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ՊՈԱԿ-ի «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային Ակադեմիայի «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ	9,918.0
				ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ ՊՈԱԿ-ի «Ամպային հաշվարկների միջավայրի ստեղծում գիտական և կիրառական խնդիրների լուծման համար» ծրագրին պետական աջակցություն	ՀՀ գիտությունների ազգային Ակադեմիայի «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ	20,570.0
1119	11001	«Գիտական և գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտու-թյուններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձա-կոնստրուկտորական աշխատանքներ»	104018 - ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն			5,223,923.7

(հավելվածը խմբ. 01.10.21 N 1629-Լ)

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Ա. Հարությունյան